ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

22 ԱՊՐԻԼԻ 2021 թ.
№ 5 (1069)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 56-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ԱՊՐԻԼԸ ՄԵՐ ՑԱՎԻ ՈՒ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԲԱՑ ՎԵՐՔՆ Է

Պատմության ընթացքն անկանխատեսելի է, երբեմն՝ անհասկանալի, իսկ երբ պատմությունից դասեր չենք քաղում՝ պատմությունն ինքն է մեզ նոր դասեր տալիս:

Հայոց ցեղասպանության 106-ամյա հեռավորությունից այսօր նորովի են արժևորվում հայ ժողովրդի անցած մաքառումների ու պայքարի ուղին, մեր ազգային հերոսներն ու նրանց սխրանքները: Հայ ժողովուրդը դարեր շարունակ իր գոյության կռվում անդուլ մաքառել է, ընկել է ու բարձրացել՝ իր ինքնությունը հաստատող ազգային մշակույթով, ազատաբաղձության կամքով ու կորովով՝ Ավարայրից մինչև Սարդարապատ ու Շուշի ձգվող ճանապարհով՝ ամուր պահելով իր ոգին և հույսը՝ արթուն…

Հազարամյակների փոշին թոթափած հայ ժողովուրդը 21-րդ դարում նորից բախվեց իր դարավոր թշնամու ատելությանն ու մաղձին, նորից դարձավ պատերազմի թատերաբեմ, և հողը նորից ներկվեց հայ քաջորդիների արյունով: Հազարամյակների փոշին թոթափած հայ ժողովուրդը, որին պատմության ընթացքում ուղեկցել է ոչ միայն պարտությունների ու անկումների, այլև փառավոր հաղթանակների հիշողությունը, այսօր կանգնել է ժամանակի դաժան մարտահրավերների ու աշխարհի անտարբեր հայացքի առաջ…

Դարը փոխվում է, իսկ թուրք-ազերիին՝ ոչ. 20-րդ դարի Հայոց ցեղասպանությունը նրանց համար խրախճանք էր, որը շարունակվում է 21-րդ դարում… Նրանց անասնական ցասումն անհագուրդ է, իսկ տարածքներն ընդլայնելու մոլուցքը՝ անեզր ու աննկարագրելի…

Արցախյան վերջին՝ 44-օրյա գոյամարտը բացահայտեց անգամ անբացահայտելին. թուրք-ազերի տանդեմն այսօր սպառնալիք է ոչ միայ Հայաստանի ու հայերի համար…Իսկ մենք, որ վտանգի պահին ազգովի մի բռունցք ենք դառնում, այս անգամ չկարողացանք պահել մեր սահմանների անվտանգությունը…Մեր զինվորները քաջության բազում օրինակներ ցուցաբերեցին, բայց եղավ այն, ինչ եղավ…

Ապրիլի 24-ի շեմին խորհելու շատ բան ունենք…Մենք քիչ ենք, բայց վտանգի ահեղ ժամին միավորվել ենք, մեր պատմական հիշողությունը ծովի պես ալիքվել է դեպի Ծիծեռնակաբերդ ձգվող ճանապարհին, Մայիսյան հաղթանակները խիզդով են լցրել մեր հոգիները…

Մերն են և՝ պարտությունները, և՝ հաղթանակները: Դրանք մեր ատելության ու սիրո պտուղներն են, մեր Անկախության լուսավոր ու ստվերոտ կողմերը… Այո, այսօր խորհելու շատ բան ունենք. «վայրի ցեղերին չխառնվելու» բնազդով ամրագրել ենք փոքր, բայց յուրօրինակ ազգի մեր տեսակը ու հպարտացել մեր հնամյա ծեռագիր մատյաններով…Աշխարհը գիտի՝ որտեղից ենք գալիս… Գիտե՞նք մենք արդյոք, թե դեպի ուր ենք գնում այսօր… Սա այսօրվա գերհարցն է, որ յուրաքանչյուրս տալիս ենք մեզ՝ ցավով ու տագնապով…

Արցախյան գոյամարտը շատ բան փոխեց մեր կյանքում, իսկ ապրիլը մեր ցավի ու հիշողության բաց վերքն է, որ հիշեցնում է՝ ազգի կեցության խորհուրդը ոչ միայն մեր անցյալի ծեռքբերումների հպարտ ըմբռնումն է, այլև Հայրենիքի զարգացման ու առաջընթացի, ազգային միասնականության ու գալիքի մեջ նոր հաղթանակներ կերտելու հույսի ու ոգու ամրապնդումը:

Իմաստուն Նժդեհի խոսքերն են. «…Միշտ էլ պարտվել են այն ազգերը, որոնք ունեցել են մի հատիկ հենարան՝ թիվը, քանակը: Կռվադաշտը միշտ էլ պատկանել է որակին: Նրանն են վաղվա հաղթանակները»:

Մենք պետք է հավատանք վաղվա մեր հաղթանակներին, և դրա համար պետք է ազգովի մի բռունցք դառնանք ու առաջ նայենք…

Միլվա ԱՍՐՅԱՆ

Մարսելի «Խաչատուր Աբովյան» վարժարանը երկօրյա հայկական կրթօջախ է, ուր հաճախում են Մարսելի շուրջ 200 հայ աշակերտներ

ՀՊՄՀ Բանասիրական ֆակուլտետը մի քանի անգամ հեռավար ձևաչափով հանդիպել է վարժարանի ուսուցիչներին, վերապատրաստել նրանց, ուղարկվել են դասադիտարկումներ, տրվել մեթոդական ցուցումներ՝ հայոց լեզուն իբրև երկրորդ լեզու դասավանդելու գործում:

Ապրիլի 8-ին Մանկավարժական համալսարանի և Մարսելի «Խաչատուր Աբովյան» վարժարանի միջև կնքվեց համագործակցության հուշագիր: Հուշագրի համաձայն՝ Մեծ Լուսավորչի անունը կրող կրթական երկու հաստատությունները կհամագործակցեն ակադեմիական, մշակութային և կրթական աշխատանքները խթանելու նպատակով: Կողմերը կհամագործակցեն տեղեկատվության, գիտական նյութերի և տպագրությունների փոխանակման, ուսումնամեթոդական և նյութատեխնիկական բազայի ամրապնդման, դասախոսական անձնակազմի հրավիրելու, համատեղ գիտահետազոտական գործունեության, կրթական ծրագրերի մշակման, կատարելագործման և ուսանողների պրակտիկայի կազմակերպման ոլորտներում:

Մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը ողջունեց հյուրերին և նշեց, որ գաղթօջախների թվի ավելացմանը զուգահեռ պետք է քայլեր ձեռնարկվեն հայոց լեզվի և ազգային մշակույթի պահպանման համար:

«Մեր առաքելության մի մասը կարող ենք իրականացված համարել, եթե կարողանանք նպաստել, որ երեխաների ինչ-որ մասը կարողանա պահպանել լեզուն ու մշակույթը»,-նշեց ռեկտորն ու վարժարանի տնօրեն Կարեն Խուրշուդյանին խորհուրդ տվեց գործունեության ընթացքում շեշտադրել հայոց լեզվի, գրականության և մշակույթի դասավանդման կատարելագործումը: Ռեկտորն ընդգծեց, որ ոչ միայն մանկավարժության, այլև մշակույթի ոլորտում բուհը կարող է առանձնակի օգտակար լինել՝ կապված նրա դասավանդման մեթոդիկայի հետ: Նա հույս հայտնեց, որ ամենատարբեր ձևաչափերով համագործակցությունը կունենա շոշափելի արդյունքներ և ժամանակի ընթացքում կընդլայնվի՝ ներառելով ոչ միայն պրոֆեսորադասախոսական կազմին, այլև ուսանողներին:

Մարսելի «Խաչատուր Աբովյան» վարժարանի տնօրեն Կարեն Խուրշուդյանը շնորհակալություն ➢2

«Պատմության մոռացությունը ծանր հիվանդություն է, որ խեղանդամում է հոգին, այնտեղից դուրս մղում՝ սրբացած ավանդույթների, բարոյական բարձր ու ստուգված արժեքների կենարար ուժը և ուզածդ ժողովրդի շատ արագորեն կարող է վերածել մի անկազմակերպ, սպառողական հոգեբանությամբ ապրող, հայրենի հողի, մայրենի լեզվի նկատմամբ՝ անտարբեր ամբոխի»:

ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ

Մարսելի «Խաչատուր Աբովյան» ...

➢1 հայտնեց ընդունելության և համագործակցության պատրաստակամության համար և խոսեց այն խնդիրների մասին, որոնց առնչվում է դպրոցը: Հայկական երկօրյա դպրոցի առջև առաջին հերթին հայապահպանության խնդիրն է դրված, և այդ գործում տնօրենը կարևորում է հատկապես Մանկավարժական համալսարանի ներուժը՝ մեթոդական աջակցություն, վերապատրաստումներ, տպագրություններ և այլն:

Կարեն Խուրշուդյանը նշեց նաև, որ ունեն դպրոցն ընդլայնելու, այն ամենօրյա դարձնելու նպատակ և ծրագիր, ուստի պետք է հզորանալ՝ առաջին հերթին սկսելով մանկավարժների մասնագիտական որակի բարձրացումից:

Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ «ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ» ԽՈՐԱԳՐՈՎ

Ներկա ժամանակահատվածում գիտաժողովների, քննարկումների և տարբեր միջոցառումների հարթակ է դարձել առցանց ձևաչափը: Հերթական նման հանդիպումը «Լեզու և հասարակություն» խորագրով գիտաժողովն էր, որը նախաձեռնել էր Մանկավարժական համալսարանի Օտար լեզուների ֆակուլտետի ռոմանագերմանական լեզուների և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնը:

Մանկավարժական համալսարանի վերոհիշյալ ամբիոնի դասախոսները և ուսանողները գիտաժողովին մասնակցում էին համալսարանի Պուշկինի կենտրոնից, իսկ հանրապետության տարբեր համալսարանների անգլերենի, ռուսերենի և իսպաներենի մասնագետները՝ առցանց ձևաչափով: Գիտաժողովին մասնակցում էին նաև արտերկրների մասնագետներ Ֆինլանդիայից, ՌԴ-ից, Հունաստանից, Իսպանիայից:

Գիտաժողովը բացեց Օտար լեզուների ֆակուլտետի ռոմանագերմանական լեզուների ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Տիգրան Միքայելյանը: Բանախոսն ընդգծեց, որ քննարկման թեման անչափ արդիական է ու մերօրյա, անդրադառնալով գիտաժողովի կազմակերպման նպատակին՝ նա ընդգծեց, որ մասնակիցները գիտական մակարդակում կանդրադառնան լեզու և հասարակություն՝ միմյանց փոխլրացնող երևույթներին, միաժամանակ դիտարկելով դրանց միջառարկայական կապերը՝ հանրալեզվաբանության, հոգեբանալեզվաբանության և այլ տեսանկյուններից:

Ռոմանագերմանական լեզուների և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի պրոֆեսոր Ելենա Մխիթարյանի նախաձեռնությամբ կազմակերպված միջազգային գիտաժողովը փորձառու մասնագետների կողմից լեզվի և հասարակության փոխադարձ առնչություններում տեղ գտած արդի հիմնահարցերի քննարկման հետաքրքիր հանդիպում էր, որտեղ հանգամանալի զեկուցումով հանդես եկավ պրոֆեսոր Ելենա Մխիթարյանը:

Երկու գիտական նիստերում դասախոսները և ուսանողները հանդես եկան լեզվի տեսության, հանրալեզվաբանության, գործաբանական լեզվաբանության, խոսույթի վերլուծության և ոճագիտության, լեզվական համակարգերի փոխազդեցության հարցերի շուրջ զեկուցումներով:

Գիտական զեկուցումների, բանավեճերի ու երկխոսությունների ամփոփումներից հետո կձևակերպվեն որոշակի հիմնահարցերի պատասխաններ ու լուծումներ, որոնք կգրախոսվեն և կիրապարակվեն էլեկտրոնային տարբերակով:

ԱՌՑԱՆՑ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀՊՄՀ գիտահետազոտական կենտրոնի նախաձեռնությամբ ապրիլի 5-ից 17-ը Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դասախոսների համար կազմակերպվեցին մասնագիտական վերապատրաստումներ: Վերապատրաստմանը մասնակցել է 45 դասախոս: Վերապատրաստողը արտերկրում մեծ ճանաչում ունեցող հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ուկրաինայի ընտանեկան և երիտասարդական քաղաքականության պետական ինստիտուտի բաժնի վարիչ, Կիևի վերականգնողական կենտրոնի հոգեբանական ծրագրերի ղեկավար, հատուկ վիճակների ակտիվ թերապիայի, գանգուղեղային վնասվածքների, քրոնիկ հոգեկան հիվանդությունների, հաշմանդամների կլինիկական հոգեբան Սերգեյ Իվանի Բոլտիվեցն էր:

Պրոֆեսորի վերապատրաստմամբ դասախոսները ձեռք բերեցին գիտելիքներ, հմտություններ և կարողություններ ժամանակակից կիրառական և կլինիկական հոգեբանությունից: Բացի մասնագիտական առարկայից, դասախոսները վերապատրաստվել են նաև ուսուցման ժամանակակից մեթոդների և ինֆորմացիոն տեխնոլոգիաները կրթության ոլորտում առարկաների շուրջ:

Համավարակով պայմանավորված՝ վերապատրաստումները կազմակերպվել են առցանց, որի փորձառությունը կենտրոնն ունի. այդ ձևաչափով է անցկացվել նաև Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի մասնագիտական վերապատրաստումը:



ԿՈՎԻԴ-19. ԵՂԵՔ ԻՐԱԶԵԿՎԱԾ ԵՎ ԶԳՈՆ

ՀՊՄՀ Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության ամբիոնի նախաձեռնությամբ անցկացվեց «COVID-ը մեզ հետ, մեր կողքին» խորագրով սեմինար: Առցանց սեմինարը, որտեղ զեկույցներով հանդես եկան տարբեր ֆակուլտետների ուսանողներ, կազմակերպվել էր ուսանողների իրազեկվածությունը բարձրացնելու, հակահամաճարակային կանոնները ևս մեկ անգամ վերհիշելու և տարաբնույթ ուսումնասիրությունների փոխանակման նպատակով:

Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության ամբիոնի վարիչ Նարինե Սահակյանը կարևորեց ձեռնարկի անցկացումը և խոսեց ամբողջ աշխարհում և ՀՀ-ում Covid-19-ի հիմնախնդիրների մասին: Նա այն կարծիքին է, որ վիրուսի փոխանցումը կանխելու և հնարավորինս նվազեցնելու լավագույն միջոցը տեղեկացված լինելն է: «Չնայած նրան, որ աշխարհում դեռ չկա բացատրություն, թե ինչով է պայմանավորված հիվանդության ընթացքն այս



կամ այն մարդու մոտ, բայց արդեն կարելի է հետևություններ անել, առողջացած օրգանիզմի վրա նրա թողած հետևանքների վերաբերյալ»,- նշեց Նարինե Սահակյանն ու խոսեց նաև մեր հանրապետությունում տարվող գիտական հետազոտությունների, համաճարակի դեմ համաշխարհային պայքարի և հասարակության շրջանում տարածված մի շարք թյուր կարծիքների մասին:

Ուսանողներն իրենց զեկույցներում նախ ներկայացրին տարբեր ժամանակներում աշխարհին պատուհասած ամենատարբեր վարակները, դրանց առաջացման պատճառների ու վարկածների մասին, ապա անդրադարձան թագավարակի բռնկման ալիքներին, արտահայտման ձևերին և այլն: Կոկորդի, գլխի, մկանային կամ ոսկրային ցավեր, համի և հոտի զգացողության բացակայություն, աղեստամոքսային համակարգի խանգարման դրսևորումներ և այլն. ապագա մանկավարժները ևս մեկ անգամ նշեցին Covid-19-ի արտահայտման ձևերն ու անդրադարձան համավարակի բուժման տարաբնույթ մոտեցումներին, կանխարգելման նպատակով իրականացվող միջոցառումներին, տարածման վիճակագրական ցուցանիշներին և այլն: Ներկայացվեց նաև վարակի և արյան տարբեր խմբերի միջև կապը, որի ուսումնասիրությունների արդյունքում հայտնի է դարձել՝ արյան երկրորդ խումբ ունեցողներն առավել դժվար են արձագանքում վարակին: Խոսելով Covid-19 դեմ պատվաստման բացասական ներգործությունների և կանխատեսումների մասին, ուսանողները վերլուծեցին նաև կրթության վրա կորոնավիրուսային համաճարակի ազդեցությունը, դրա դրական և բացասական հետևանքները: Առցանց սեմինարն ընթացավ հարցուպատասխաններով, քննարկումներով: Մասնակիցները միակարծիք են՝ վարակը փոխել է մարդկանց կյանքը, և բոլորը հայտնվել են անսովոր իրավիճակում: Պետք է հիշել, որ մարդու առողջությունն իր ձեռքերում է, որին պետք է պատասխանատվությամբ մոտենալ:

Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության ամբիոնի վարիչ Նարինե Սահակյանը շնորհակալություն հայտնեց ուսանողներին և դասախոսներին համատեղ աշխատանքի, հետազոտությունների համար և ընդգծեց, որ սա հնարավորություն կտա տարածված այս թեմայի շուրջ համալրել գիտելիքները գիտական հետազոտություններով, կարևոր գիտելիքներով: Նա հորդորեց լինել իրազեկված, զգոն իրենց ու շրջապատի նկատմամբ, հիշել՝ բոլորիս վարքագծից է կախված ինչպես յուրաքանչյուրի ընտանիքի, այնպես էլ Մանկավարժական համալսարանի համաճարակային իրավիճակը:

Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆ

Ավետյաց երկիրն՝ իր գույներով

Հայաստանի նկարիչների միության սրահում ապրիլի 15-ին բացվեց ՌԴ նկարիչների միության անդամ, ՌԴ կրթության ակադեմիայի ակադեմիկոս, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՄՀ կերպարվեստի ամբիոնի վարիչ Լեմս Ներսիսյանի ստեղծագործությունների անհատական ցուցահանդեսը՝ 106 գեղանկարչական աշխատանք՝ «Էրգիր Ավետյաց» խորագրով, որ նվիրված էր Հայոց ցեղասպանության 106-րդ տարելիցին:

Ցուցահանդեսը բացեց Հայաստանի նկարիչների միության նախագահ Սուրեն Սաֆարյանը: Նա ներկաներին հորդորեց ըմբոշխնել վարպետի վրձնով ստեղծված գեղեցիկ կտավներից տարածվող ջերմությունն ու դրական լիցքերը, որոնք աչք են շոյում ոճային և գունային լուծումներով:

Սուրեն Սաֆարյանը շնորհավորեց գեղանկարիչ Լեմս Ներսիսյանին՝ ցուցահանդեսի բացման կապակցությամբ՝ մաղթելով նրան ստեղծագործական նոր հաջողություններ և մանկավարժական բեղուն աշխատանք Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետի ուսանողների հետ:

Գեղանկարիչ Կարեն Աղամյանը բարձր գնահատեց Լեմս Ներսիսյանի ներդրումը հայ գեղանկարչության զարգացման ասպարեզում, ինչպես նաև այն մանկավարժական աշխատանքը, որի միջոցով նա իր գիտելիքները, փորձառությունն ու ջերմությունն է փոխանցում ապագա մանկավարժ-նկարիչների տարբեր սերունդներին:

«Ինչպես բոլոր հայերը, այնպես էլ ես դեռ երիտասարդ տարիքից հետաքրքրվել եմ Հայոց ցեղասպանության խնդրով և միշտ կարծել եմ, որ այդ ոճրագործության մասին պետք է խոսվի, այն պետք է ներկայացվի հանրությանը»,-ասաց Լ. Ներսիսյանը:

Գեղանկարիչն այն կարծիքին է, որ խնդիրը կարող են հանրայնացնել ոչ միայն պատմաբաններն ու փիլիսոփաները, այլև արվեստագետները:

Եվ ահա, Արևմտյան Հայաստանով շրջելիս, նկարչի վրձնի ներքո կյանք են առել յուրաքանչյուր հուշարձան, յուրաքանչյուր պատմական մասունք, որ հրաշքով փրկվել է ոճրագործությունից:

«Ինձ հաջողվել է այսօր այդ պատմական հիշողությունը հասարակությանը ներկայացնել վիզուալ պատկերներով: Ես Ավետյաց երկիրը փորձել եմ ներկայացնել իր իսկ գույներով: Ցուցահանդեսն ունի երկու եզրույթ՝ գեղարվեստական և տեղեկատվական: Ես եղել եմ այդ բոլոր վայրերում՝ Անիից մինչև Կիլիկիա, և Եղեռնի ոճրագործությունը ներկայացրել եմ իմ հույզերից ու ապրումներից ծնված գեղարվեստի միջոցով: Հողը, որի վրա ես ոտք էի դրել, հայկական էր, իսկ մարդիկ, որ հանդիպում էին՝ օտար»:

Պրոֆեսոր Լեմս Ներսիսյանը շնորհակալություն հայտնեց իր անհատական ցուցահանդեսի բոլոր այցելուներին՝ ընդգծելով, որ յուրաքանչյուր հայ իր հոգում ունի Ցեղասպանության պատմական հիշողությունը և այն դրախտավայր երկիրը, որին նվիրված են ցուցադրված կտավները:

Գեղանկարչական աշխատանքների հետ մեկտեղ ցուցադրված էին նկարչի գրաֆիկակական աշխատանքները՝ աշխարհահռչակ մտավորականների գծանկարչական դիմապատկերներով ու Հայոց եղեռնը դատապարտող խոսքերով: Ցեղասպանությունը դատապարտող ևս մեկ ձևաչափ, որ Լեմս Ներսիսյանի ներկայացրել էր արվեստասեր հանրությանը: Ի դեպ, ցուցահանդեսը Ցեղասպանության 100-ամյակին ներկայացվել է նաև Փարիզում:

Ցուցահանդեսն իրականացվել էր Հայաստանի նկարիչների միության և «ԱրթՋ» կրթամշակութային հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ:

Այցելուները երկար ըմբոշխնեցին ներկայացված ստեղծագործություններից ճառագող լույսն ու ջերմությունը՝ ծանոթ ու հարազատ վայրերի, բնապատկերների, բնաշխարհի գեղեցիկ ծաղիկների տեսքով՝ հոգու և հիշողության մեջ փայփայելով գեղանկարիչ Լեմս Ներսիսյանի՝ Ավետյաց երկրից բերած կարոտի գույները:

Սիլվա ԱՍՐՅԱՆ







ՈՉ ՄԻԱՅՆ ԱՇԽԱՏԱՆՔ՝ ՆԱԵՎ ԽՂՃԻ ԹԵԼԱԴՐԱՆՔ

Մանկավարժական համալսարանի 20 հոգեբան-մասնագետ այսօր պարգևատրվեց ՀՀ ՊՆ պատվոգրերով: Պատվոգրերը նրանց հանձնեց ՊՆ ԳՇ զորքերի բարոյահոգեբանական ապահովման աշխատանքների վարչության ավագ սպա Վիգեն Մանուկյանը: Վերջինս ռազմական ղեկավարության անունից շնորհակալություն հայտնեց Մանկավարժական համալսարանին և հոգեբան-մասնագետներին՝ Արցախյան 44-օրյա մարտական գործողությունների ընթացքում զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին հոգեբանական աջակցություն ցուցաբերելու համար: Վիգեն Մանուկյանը վստահեցրեց, որ բարձր են գնահատում առաջին իսկ օրից զինվորների և նրանց ընտանիքների հետ տարվող հոգեբանական աջակցության արդյունքներն ու վստահեցնում՝ հետպատերազմյան շրջանում ևս այն շատ կարևոր է:

ՀՊՄՀ հոգեբանների մասնագիտական խումբը հոկտեմբերի 2-ից մինչև դեկտեմբերի 17-ն ունեցել է 631 այցելություն վիրավոր 211 զինծառայողի և նրանց ընտանիքների անդամների: Բացի բուժհաստատություններում տարվող աշխատանքներից, հոգեբանները այցելել են նաև զոհվածների ընտանիքներին, մասնագիտական աջակցություն ցուցաբերել նրանց ընտանիքի անդամներին: Բացի այդ, զինծառայողների հետ բարոյահոգեբանական ապահովման աշխատանքներ են իրականացվել նաև Վայոց ձորի և Սյունիքի զորամասերում: Ի դեպ, բազմակողմանի աջակցություն ցուցաբերելու համար հետմահու պատվոգրի արժանացավ նաև ՀՊՄՀ Հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Խուդոյանը:

ՀՊՄՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանը շնորհակալություն հայտնեց մասնագիտական խմբին և վստահեցրեց՝ նրանցից շատերը դա դիտարկել են ոչ միայն աշխատանք, այլև խղճի թելադրանք:

«Մանկավարժական համալսարանի հոգեբանների բանակն այսօր էլ պատրաստ է կատարել իր մասնագիտական պարտականություններ և կանգնել զինվորի ու նրանց ընտանիքների կողքին»,- վստահեցրեց Սրբուհի Գևորգյանը:

ԿԼՈՐ ՍԵՂԱՆ-ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ԲՈՒՀԵՐՈՒՄ ԳՐԱԲԱՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ

Մարտի 27-ին առցանց ձևաչափով տեղի ունեցավ կլոր սեղան-քննարկում, որ կազմակերպել էր Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ Լեզվաբանական հետազոտությունների գիտական լաբորատորիան:

Առցանց ձևաչափով կազմակերպված քննարկումը մասնակիցների ներկայության առումով ազգային էր, աշխարհագրական առումով՝ միջազգային: Քննարկմանը մասնակցում էին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի, Երևանի պետական համալսարանի, Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի, Արցախի պետական համալսարանի, Շիրակի պետական համալսարանի, Գորիսի պետական համալսարանի մասնագետները, ինչպես նաև մասնագետներ ԱՄՆ-ից և Հոլանդիայից:

Կլոր սեղանի քննարկմանն էին առաջադրվել մի շարք հարցեր, որոնք վերաբերում են բուհերում գրաբարի դասավանդման արդի խնդիրներին. գրաբարի դասագրքերի գործնականությանը, դասագրքերում տեսական և գործնական բաժինների համամասնությանը, գրաբարի տեսական մասի յուրացման խնդիրներին, գործնական մասի առաջադրանքների դերին՝ գրաբարի բնագրերի ընկալման հարցում, գրաբար լեզվամտածողության ձևավորման խնդիրներին, դասագրքերին ներկայացվող արդի պահանջներին, գրաբարի նոր դասագրքեր ստեղծելու անհրաժեշտությանը՝ էլեկտրոնային տարբերակներով, արտերկրի հայագիտական կենտրոնների հետ կապեր հաստատելու անհրաժեշտությանը՝ գրաբարի ուսուցմանը նպաստելու նպատակով և այլն:

Լեզվաբանական հետազոտությունների գիտական լաբորատորիայի վարիչ պրոֆեսոր Լալիկ Խաչատրյանը, կարևորելով գրաբարի իմացությունն ապագա ուսուցիչների համար, ընդգծեց, որ մանկավարժական պրակտիկայում հայոց լեզվի ուսուցիչները ժամանակակից հայերենի իմաստաբանական, բառակազմական և քերականական մի շարք իրողություններ պետք է կարողանան մեկնաբանել գրաբարից ստացած գիտելիքներով. հետևաբար գրաբարի իմացությունը ոչ միայն հին հայերենի տեսական համակարգի յուրացում է, այլև գործնական աշխատանքի բանալի և մշակութային իմացության գործիք: Մյուս կողմից՝ գրաբարի բնագրերի փոխադրությունը սովորողներին հաղորդակից է դարձնում մեր մշակութային արժեքներին, որոնց իմացությունը հոգևոր կամուրջ է դառնում՝ շաղկապելով անցյալի ու ներկայի հոգևոր արժեքները: Ըստ այդմ՝ դասավանդման ընթացքում հարց է առաջանում. ինչպե՞ս հասնել ցանկալի արդյունքի, որ ուսանողները կարողանան ձեռք բերած գիտելիքները կյանքում կիրառել: Պրոֆեսոր Հրաչ Մարտիրոսյանը (Լեյդենի համալսարան, Հոլանդիա) գրաբարի ուսուցման ընթացքում կարևորեց տարժամանակյա դիտվածքի հետազոտությունն ու մատուցումը, ինչպես նաև քերականական գծապատկերների գործածությունը, որոնք հնարավորություն կտան հակադրությունների միջոցով արժևորել լեզվական իրողությունները և տարբերակել դրանց համաժամանակյա և տարժամանակյա դրսևորումները: Հր. Մարտիրոսյանն ընդգծեց արտասահմանյան հայագիտական կենտրոնների հետ կապ ստեղծելու անհրաժեշտությունը:

Բանասիրական գիտությունների թեկնածու Լիլիթ Խաչատրյանը (Լոս Անջելես, ԱՄՆ) խոսեց Սփյուռքում գրաբարի դասավանդման դժվարությունների մասին, մանավանդ տարամակարդակ ուսանողներով համալրված լսարաններում: Նա դժգոհություն հայտնեց գործող դասագրքերից, որ դրանք չունեն համապատասխան քարտեզներ՝ բնագրերում հանդիպող տեղանուններն աշխարհագրորեն տեղորոշելու համար, մանավանդ այդ տեղանունները պատմական Հայքի զանազան վայրերի անվանումներ են, իսկ Սփյուռքի ուսանողներն առավել քան կարիք են զգում դրանց շուրջ տեղեկություններ քաղելու: «Ապագա դասագրքերում պետք է լինեն թեստային առաջադրանքներ. այդպիսի դասագրքերը տարածված են արտասահմանյան կրթական հաստատություններում»,- եզրակացրեց Լ. Խաչատրյանը:

Դոցենտներ Օֆելյա Բաբայանը, Լուսինե Մարգարյանը և Շողեր Մինասյանը (Արցախի պետական համալսարան) ընդգծեցին, որ չնայած ասպարեզում գործող դասագրքերն ունեն որոշակի առավելություն, այնուամենայնիվ մեթոդական առումով չեն բավարարում կրթության ժամանակակից պահանջները, ուստի առաջարկեցին քերականական իրողություններն ուսուցանել պարզից բարդն ընթացող մեթոդական ուղիով: Մյուս կողմից՝ դասագրքերում փոխադրությունների համար տրված բնագրային հատվածներն անջրպետված են քերականական նյութից. այդ հատվածները պետք է այնպես ընտրել, որ հնարավոր լինի տվյալ դասանյութի քերականական իրողությունները մեկնաբանել դրանց շրջանակներում, ամրապնդել քերականական գիտելիքները՝ միաժամանակ կապ ստեղծելով լեզվի և գրականության միջև:

Պրոֆեսոր Սերգո Հայրապետյանը և դոցենտ Արմենուհի Ավագյանը (Շիրակի պետական համալսարան) կարևոր համարեցին գրաբարի դասավանդման ընթացքում հասնել գրաբարի լեզվամտածողության ձևավորմանը և որպես խնդրի լուծման բանալի՝ առաջարկեցին համեմատության մեջ մատուցել գրաբարի և աշխարհաբարի նախադասությունների կառուցատիպերը:

Դոցենտներ Սուսաննա Գրիգորյանն ու Նաիրա Պարոնյանը (ԵՊՀ) գրաբարի արդյունավետ ուսուցման բանալին տեսնում են բնագրային հատվածների հակադարձ թարգմանության մեջ: Ըստ նրանց՝ գրաբարից աշխարհաբար թարգմանությունները մակերեսային պատկերացում են տալիս հին հայերենի լեզվակիրների մտածողական կաղապարների մասին, քանի որ այս դեպքում շեշտը դրվում է աշխարհաբար թարգմանության և ժամանակակից մտածողությամբ նախադասություններ կազմելու (ձևակերպելու) խնդիրներին: Նրանք վկայեցին Գևորգյան ճեմարանում կիրառած փորձը, որի արդյունքնում ուսանողներն առավել ջանասիրությամբ են կատարում աշխարհաբար-գրաբար թարգմանություններ:

Դոցենտ Սվետլանա Մանուչարյանը (Գորիսի պետական համալսարան) ընդգծեց, որ գործող դասագրքերը մասամբ չեն բավարարում արդի կրթական մարտահրավերներին, ունեն 20-70 տարվա վաղեմություն, ուստի նոր դասագրքերի ստեղծման անհրաժեշտություն է զգացվում, մասնավորապես էլեկտրոնային դասագրքերի, որոնք կարող են ծառայել իբրև յուրատուկ ինքնուսույցներ:

Կլոր սեղանի մասնակիցները մի հարցում միակարծիք էին. պետք է կազմել նոր դասագրքեր և ուսումնաօժանդակ ձեռնարկներ, որոնք բավարարեն բարձրագույն կրթության արդի պահանջները, նպաստեն գրաբարի համակողմանի և խորը յուրացմանը՝ դառնալով նախնյաց մշակութային ժառանգությանը տիրապետելու գործիք:

Կլոր սեղան-քննարկման ավարտին որոշվեց կազմել ծրագրաստեղծ մասնագիտական հանձնախումբ պրոֆեսորներ Լ. Խաչատրյանի, Հր. Մարտիրոսյանի և Ս. Հայրապետյանի մասնակցությամբ, որը կքննարկի հանդիպման մասնակիցների կարծիքները, հաշվի կառնի նրանց առաջարկություններն ու դիտարկումները, դրանց հիման վրա կկազմի գրաբարի ուսուցման նոր ծրագիր և այն կներկայացնի հաջորդ հանդիպմանը՝ հունիսի վերջերին՝ կլոր սեղանի ձևաչափով:

Լալիկ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՀՊՄՀ պրոֆեսոր



Գրքի շնորհանդես

Կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Պիպոյանը ապրիլի 9-ին Մանկավարժական համալսարանում կազմակերպել էր իր հեղինակած «Հայաստանի ձկները» գրքի շնորհանդեսը, որին հրավիրվել էին սիրողական ձկնորսությամբ զբաղվող անհատներ:

Հեղինակը հանգամանորեն ներկայացրեց գրքում զետեղված նյութերը՝ ինչպես օգտվել գրքից, ինչպես որոշել ձկների տեսակները՝ ընդգծելով, որ այն հիմնականում ուղղված է սիրողական ձկնորսությամբ զբաղվողների մակարդակի բարձրացմանը:

Հեղինակը հիշեցրեց, որ Հայաստանում ապրող 3200 ձկնատեսակներից այժմ մեր գետերում, լճերում և ջրամբարներում հանդիպում է սակավաթիվ՝ շուրջ 50 ոսկրային ձկների դասին պատկանող տեսակ:

«Ընդամենը կես դար առաջ Հայաստանի ջրերում ձուկն այնքան առատ էր, որ ջուր վերցնելիս դույլի կամ կժի մեջ ձուկ էր ընկնում, իսկ այսօր «մեր գետերի ու լճերի ձկները ոչնչացվում են այնքան բարբարոսաբար, որ ջրավազանները կորցրել են իրենց ձկնատնտեսական նշանակությունը և անգամ պիտանի չեն սպորտային ձկնորսության համար»,- Ս. Պիպոյանը մեջբերեց «Հայաստանի ձկները» վերնագրով Մ. Դադիկյանի՝ կես դար առաջ հրատարակած գրքից: Ապա ավելացրեց, որ ձկների ոչնչացմանն այսօր էլ նպաստում են տարբեր գործոններ. երբ ջրերի մեջ արտադրական ձեռնարկությունների թափոններ են նետվում, ձուկ որսալու նպատակով պայթուցիկ նյութեր են օգտագործվում, փոխում են գետերի հունը և այլն:

Պարզվում է, որ այս հարստության ոչնչացման հիմնավոր պատճառներից մեկն էլ այն է, որ մեզանում շատ քչերն են ծանոթ ձկների կյանքին: Նաև քչերը գիտեն ձկներին ոչնչացնելու հետևանքների մասին:

Հեղինակը ներկայացրեց, որ, այնուամենայնիվ, Հայաստանի գետերում ու լճերում հանդիպում է 50 տեսակի ձուկ, և դրանցից որոշները մինչև այժմ

էլ սիրողական ձկնորսության ցանկալի օբյեկտ են այն բազմահազար ձկնորսների համար, որոնք նախընտրում են իրենց հանգիստն անցկացնել գետերի ու լճերի ափին:

Ըստ տարիների ընթացքում արված դիտարկումների, «սիրողական ձկնորսությամբ զբաղվողները ոչ միայն չեն կարողանում հստակ տարբերել Հայաստանի ջրերում բնակվող ձկնատեսակներից շատերին, այլև հստակ պատկերացում չունեն աառանձին ձկնատեսակների աճի, սննդառության, բազմացման, նրանց ապրելավայրերին ու կենսակերպին բնորոշ առանձնահատկությունների մասին»: Ահա ինչու, այս ամենը հաշվի առնելով, հեղինակը որոշել է ստեղծել մի գիրք, որն ուղեցույց-որոշիչ կլինի սիրողական ձկնորսությամբ զբաղվող անձանց, ինչպես նաև բնությամբ հետաքրքրվողների համար:

Գիրքը հետաքրքիր տեղեկություններով և ձկնատեսակների լուսանկարներով կօգնի հանրության, հատկապես ձկնորսների կողմից Հայաստանի ձկների բազմազանության ճանաչմանը, ինչպես նաև նրանց պաշարների պահպանմանն ու վերականգնմանը:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉԸ ՄԵՐ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆ Է

ՏԱՐԵՑՏԱՐԻ ԱՎԵԼԻ ԵՄ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԻՄ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Ես՝ ՀՊՄՀ շրջանավարտս, տարիներ առաջ, վստահելով այս հաստատությանը, դարձա համալսարանի մի մասնիկը, ուսում առա, վերակրթվեցի, հանդիպեցի բազում դժվարությունների ու խոչընդոտների, հաղթահարեցի ու կայացա որպես մասնագետ, ով տարիներ շարունակ ապացուցում է ՀՊՄՀ-ում ձեռք բերած գիտելիքների կենսունակությունը թե՛ տեսականորեն, թե՛ գործնականորեն: Կյանքն ինձ համար նոր ուղի բացեց, դարձա ուսուցիչ: Այժմ դասավանդում եմ Նոր Հաճնի ավագ դպրոցում որպես քիմիայի ուսուցչուհի և երախտապարտ եմ իմ ճակատագրին, որ հայտնվեցի դպրոցում. այստեղ ես մեծ անելիքներ ունեմ, հանդիպում եմ այնպիսի աշակերտների, ովքեր անհագ ծարավ ունեն ուսման նկատմամբ, մասնավորապես «Քիմիա» առարկայի, նրանք ուսումնատենչ են, և ես իրավունք չունեմ նահանջելու կամ ունեցածս գիտելիքները չհազարապատկելու, քանի որ ինձ վստահված է ուսուցիչ լինելու և առաքելությանս հավատարիմ մնալու ամենանվիրական գործը, արժանապատվորեն նվիրվելու իմ առաքելությանը: Այսպիսով տարեցտարի ավելի եմ գնահատում իմ մասնագիտությունը, սիրում և տրվում իմ աշխատանքին: Իմ անցկացրած դասերի որակի բարձրացմանը նաև նպաստում է մեր դպրոցում

ժամանակակից ռեսուրսներով կահավորված լաբորատորիան, որտեղ ունենում ենք հետաքրքրաշարժ, բազմաբովանդակ դասեր: Այստեղ աշակերտները հնարավորություն են ունենում բացահայտել իրենց ներուժը, փորձարկումներ և փոքրիկ հայտնագործություններ են անում, որն էլ բերում է այն եզրահանգման, որ կրթության համակարգը, անշուշտ, բարելավվում է, եթե գործի են դրվում ուսուցման այնպիսի մեթոդներ, որոնց հիմքում ընկած են լինում աշակերտակենտրոն մոտեցումները: Եվ ես մեծ խանդավառությամբ, իմ պրպտող և նախաձեռնող էությամբ վստահաբար վարակելու եմ շատ աշակերտների, ովքեր մեր դպրոցն ավարտելով, մեծ սեր կտածեն բնագիտական առարկաների նկատմամբ: Նման գործելաոճն արդարացիորեն կունենա իր բարի պտուղները, քանի որ ուսուցչի առաքելությունը ոչ թե սոսկ դասագրքային գիտելիքների մատուցումն է, այլև հասարակության, երկրի, պետության համար գիտակից, խելացի երեխաներ կրթելն ու դաստիարակելը:

Նարինե ԱՐԱՄՅԱՆ

Վոցանց սեմինար

Հայկական պետական մանկավարժական համալսարանի Սկզբնական կրթության ֆակուլտետի մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնը ապրիլի 1-ին, առցանց ձևաչափով, կազմակերպեց «Տարրական դասարանների մաթեմատիկայի դասընթացի ընտրովի հարցեր» խորագրով սեմինար-խորհրդատվություն: Հանդիպման շուրջ 160 մասնակիցները Սկզբնական կրթության ֆակուլտետի տարբեր տարիների շրջանավարտներ և ապագա դասվարներ էին: Կարևորելով տարրական դասարանների մաթեմատիկական կրթության ոլորտի հիմնախնդիրների և դրանց լուծման ուղիների բացահայտման նոր միտումների ու մոտեցումների իրազեկման անհրաժեշտությունը՝ ամբիոնը նմանօրինակ ձեռնարկումներին շարունակական բնույթ հաղորդելու պատրաստակամություն հայտնեց:

«Մեր օրերում կիրթ մարդ լինելը դարձել է հերոսություն... Ամեն մեկիս մեջ էլ վատը կա, թաքցնում ենք: Ու հենց թաքցնող-պահողն է կիրթ մարդը: Ցավն այն է, որ անգետ ու անդաստիարակ լինելուց այլևս չենք ամաչում...»:

Սոս ՍԱՐԳՍՅԱՆ

Սուրբ Զատիկի տոնը «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցում

Ապրիլի 4-ին՝ Սուրբ Զատիկ տոնի օրը, ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցի սաները, ուսուցչական կազմը տնօրեն Շողիկ Փահլևանյանի գլխավորությամբ այցելեցին Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդանիստ Սուրբ Պայծառակերպության տաճարը:

Ներկաներին ջերմորեն ողջունեց Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի «Տապան» թանգարանի հոգևոր առաջնորդ հայր Սեպուհ Ամիրյանը: Նա փոխանցեց Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդ Տեր Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանի շնորհավորական և օրհնության խոսքը: Այնուհետև ուրարակիր Վարդան Պողոսյանը պատմեց Սուրբ Զատիկի խորհրդի մասին, որից հետո ներկաներն արտասանեցին «Հայր մեր» տերունական աղոթքը՝ ի բարօրություն իրենց ընտանիքների և Մայր հայրենիքի:

Տեր Սեպուհն օրհնեց աշակերտների ձևավորած զատկական գեղեցիկ զամբյուղները՝ կարմիր հավկիթներով, գաթայով ու գինիով:

Այնուհետև դպրոցի աշակերտներն ուսուցիչների և ծնողների հետ միասին այցելեցին նաև Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի «Տապան» թանգարանը, որտեղ կազմակեպվեց ճանաչողական էքսկուրսիա: Աշակերտներին ողջունեց թանգարանի տնօրեն, նկարիչ Դավիթ Բաղդասարյանը: Թեմատիկ ձևավորված սրահների ցուցադրությունը և թանգարանի տեխնիկական հագեցվածությունը հնարավորություն տվեցին էքսկուրսավար Արտյոմ Ենոքյանին՝ ինտերակտիվ կերպով ներկաներին ծանոթացնելու հայոց պատմության, մշակույթի և ավանդույթների առանցքային փաստերին:

Միջոցառման վերջում «Վերածնունդ» դպրոցի աշակեերտներն այցելեցին նաև Սուրբ Գրիգոր Նարեկացու անվան գրադարանը, որտեղ պահվում է ավելի քան վեց հազար գիրք, այդ թվում՝ մանկական և անտիկ: Գրադարանի տնօրեն, մատենագետ Արուսյակ Ավոյանն իր խոսքում նշեց, որ բոլոր նմուշները և պարբերականները խնամքով ընտրված ու դասավորված են չորս հիմնական ուղղություններով՝ եկեղեցական, հայագիտական, պատմական և գեղարվեստական:

Հատկանշական է, որ Սուրբ Զատիկի տոնին նախորդող կիրակի օրը դպրոցում անցկացվեց մի գեղեցիկ բաց դաս՝ նվիրված Ծաղկազարդին: Աշակերտները տեղեկացան այն բոլոր ծեսերի ու ավանդույթների մասին, որոնք բնորոշ են Ծառզարդին:

Ուսուցիչները ներկայացրին «Զատկածառ»-ի գաղափարի իմաստը, այդ օրվան նվիրված երգերի ու պարերի խորհուրդը, համեմված տոնական ավանդական սեղանով, որտեղ իրենց պատվավոր տեղն էին գտել չամիչով փլավը, ներկած հավկիթները և, իհարկե, ավանդական փրփուր լավաշ հացը, որն ի պարծանք հայ ազգի, 2014 թվականից ընդգրկված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկում:

Ստացված գիտելիքների հիման վրա կազմակերպվեց գեղեցիկ ֆլեշմոբ (առցանց ձևաչափով)՝ ուր դպրոցի սաները խանդավառությամբ ներկայացրին ընտանիքի զատկածառն ու զատկասեղանը:

Ք. Մոսկվա
«Վերածնունդ» հայկական
կիրակնօրյա դպրոց

ԲՆՈՒԹՅԱՆ ՄԱՐԴԸ ԵՎ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ. ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ

Պոեզիա, որ մեզ թողեց իբրև նամակ՝ յուրաքանչյուրիս ուղղված

«Համո, ոսկեբերան Համո…»: Հրանտ Մաթևոսյանի բնորոշումն է:

Այսօր Համո Սահյանի մասին չգրել, չշնորհավորել չի լինի՝ մեծանուն պոետի ծննդյան օրն է ապրիլի 14-ը: Գրելն էլ՝ ի՞նչ գրես, որ կրկնություն չլինի այսքան գրածից, երեք ֆիլմից, գրքերից հետո: Գուցե մտովի Լոր գյո՞ւղ գնամ, ուր Քնքուշ անունով մի բարեհոգի կին տնօրինում է Համո Սահյանի տուն-թանգարանը: 2014-ին, երբ բացվեց թանգարանը, ու ես անպայման պիտի Լոր գնայի, գրողների միության նախագահ Էդիկ Միլիտոնյանը գրողների տնից ինձ տվեց Սահյանի մեծադիր նկարը.

- Այս նկարը տար թանգարան՝ միությունից նվեր:

Հետո խմբովին գնացինք՝ գրողներ, երաժիշտներ…

Յուրօրինակ մի ցուցահանդես կար գյուղի դպրոցում: Բայց առավել յուրօրինակն այն էր, որ դպրոցից թանգարան ճանապարհին Սահյանի պոեզիայից հատվածներ պարունակող պլակատներ էին տեղադրված: Գյուղն այս ի՜նչ սիրով էր նշում իր համագյուղացու հոբելյանը:

Գյուղապետ Դավիթը, դպրոցի տնօրեն Լիաննան, արդեն հիշատակված Քնքուշը Համո Սահյանի անունն այդ գյուղում պահում են, ինչպես իրենց տան անդամին են պահում. Համո Սահյանն իրենց հպարտությունն է, իրենց պատիվն է:

Բա այն աշակերտնե՞րը, ովքեր իմ երրորդ ֆիլմը զարդարեցին իրենց հիանալի ասմունքով: Կամ սահյանասեր այն թղթակիցը, ով ինձ խնդրեց մի պահ իջնել մեզ Լոր տանող միկրոավտոբուսից, որ պատմեմ պոետի հետ իմ հանդիպումներից, երբ նկարահանվում էր «Իրիկնահացի հրավեր» ֆիլմը…

Իսկ Համո Սահյանը, ով «Լորում չի ապրում, բայց Լորով է ապրում», երկնային հեռուներից նայում էր, ու հոգին խաղաղվում էր, որ ժամանակին ճշմարիտ էր ասել, թե. «Ինձ կհիշեն ամեն անգամ օրը բացվելիս…»:

Ինչպե՞ս չհիշեն, երբ նա իր հիասքանչ պոեզիայով թարգմանն էր յուրաքանչյուրիս մտորումի, որ մենք չէինք կարող ձեւակերպել, իսկ ինքը դրանք հուլունքի շարանով դարձնում էր պոեզիա եւ վերադարձնում մեզ՝ «Սա ձերն է, և դուք եք սրա մեջ, վայելեք…»: Եվ մենք վայելում ենք մեզ բաշխած գանձերը մի պոետի, ով իր հայրենի լեռնաշխարհում փնտրեց ու գտավ իր անդրադարձը՝ իր պապին ու ապուպապին, բնությանն ու հողին համանվագ, հողոտ-մղեղոտ, մի ծերատ լուսնի տակ իրենց հանգիստն առնող կալերով, կծիկ-կծիկ սարերով, պարան-պարան կիրճերով, մասրենու թփերով զարդարուն քերծերով… այն ամենով, ինչը կոչվում է հայոց լեռնաշխարհ, հայոց տուն ու տեղ: Եվ այդ արտացոլանքը (մարդը բնության մեջ, և բնությունը մարդու մեջ զուլալ համադրությամբ) դարձավ նրա պոեզիան, դարձավ նրա ասելիքը, նրա մտորումը:

Նա Հայաստան աշխարհի գեղեցկությունները նկարեց Սիսիանի չխամրող գույներով՝ ներկապնակի անսպառ երանգները խնամքով, բծախնդիր, մեկիկ-մեկիկ դնելով բնությանն այնքա՜ն համահունչ ու հարազատ իր կանաչ-կարմիր աշխարհի կտավին:

…Եվ, ուրեմն, շնորհավորենք այն սիրով, որ հաճախ կարդանք, հաճախ մտաբերենք, որ Համո Սահյանի թողած զուլալ պոեզիայով զուլալվի նաև մեր ներաշխարհը: Պոեզիա, որ մեզ թողեց իբրև նամակ՝ յուրաքանչյուրիս ուղղված: Սա հենց իր՝ պոետի խոստովանությունն է. «Իմ կարծիքով, բանաստեղծությունը տարբեր մարդկանց ուղղված մտերիմ նամակ է: Ոչ թե մի նամակ՝ բոլորին ուղղված, այլ ամեն մեկի համար առանձին-առանձին, որովհետև ամեն մեկն իր բաժինն է այդտեղից վերցնում, և դա նրա տողն է՝ կարծես թե բոլոր ընթերցողներին առանձին-առանձին ուղղված…»:

Հովհաննես ՊԱՊԻԿՅԱՆ

ՄԱՀԱՑԵԼ Է ՊՐՈՖԵՍՈՐ ԳԱՐԻԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԸ

Կյանքից հեռացել է Մանկավարժական համալսարանի երկարամյա դասախոս, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գարիկ Եղիազարյանը:

Գարիկ Եղիազարյանը մասնագիտական կրթությունն ստացել է նաև Երևանի պետական համալսարանում, ապա՝ Մոսկվայի պետական համալսարանում: Բարձրագույն կրթությունն ավարտելուց հետո նա իր գործունեությունն է ծավալել ֆիզիկայի գիտական ոլորտում՝ կրտսեր գիտաշխատողից մինչև դոկտոր:

1974 թվականից սկսած՝ Գարիկ Եղիազարյանը դասավանդում էր Մանկավարժական համալսարանում: 2003-2006 թթ. և 2011-2016 թթ.-ին ՀՊՄՀ ընդհանուր ֆիզիկայի ամբիոնի վարիչն էր, իսկ 2006-2011 թթ.-ին՝ ֆիզիկատեխնոլոգիական ֆակուլտետի դեկանը:

Մինչև 2018 թվականը պրոֆեսորն իր գիտական ձեռքբերումներն ու գիտելիքները ուսանողներին էր փոխանցում էլեկտրականություն և մագնիսականություն, ֆիզիկական էլեկտրոնիկա, մետաղների էլեկտրահաղորդականության դասական տեսության տարրերը, ռադիոէլեկտրոնիկա, մագնիսականության դասական տեսությունը, ֆիզիկական էլեկտրոնիկայի տարրերը, գազային պարպման ֆիզիկական հիմունքները և այլ դասընթացների շրջանակներում: Մի շարք հոդվածների հեղինակ էր:

Մանկավարժական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը ցավակցում է Գարիկ Եղիազարյանի ընտանիքին և մտերիմներին՝ վաստակաշատ մանկավարժի և գիտնականի մահվան կապակցությամբ:

ԴԵՊԻ ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ

ԱՉՔԵՐԸ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ ԷԻՆ ՆՐԱ ՆԵՐԱՇԽԱՐՀԸ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի շրջանավարտ Նորիկ Գասպարյանը ծնվել է 1998 թվականի հունիսի 17-ին, Շիրակի մարզի Սառնաղբյուր գյուղում: 2005-2016 թթ.-ին սովորել է Մ. Մադաթյանի անվան միջնակարգ դպրոցում: Խելացի ու պարտաճանաչ աշակերտ լինելուց բացի հասցրել էր գրավել ընկերների, ուսուցիչների սերն ու հարգանքը, վստահորեն կարող ենք նշել, որ մեր Նորոն անխտիր սիրված և հարգված էր բոլորի կողմից: Ընտանիքի փոքր զավակն էր, ունի ավագ եղբայր:

Նորիկը բոլորից տարբերվում էր. ամեն հնարավորություն օգտագործում էր՝ շուրջբոլորը տարածելու իր բարի ու դրական էներգիան: Լինելով շատ կատակասեր, իր բարի կատակներով միշտ ապահովում էր ուրախ մթնոլորտ, ամեն բան անում էր բոլորին ժպիտ պարգևելու համար և շատ լավ էր ստացվում նրա մոտ: Նրա փայլուն ժպիտը և բարի աչքերը ամեն ինչ պատմում էին նրա էության մասին, բացահայտում ներաշխարհը:

Դպրոցական տարիներին բազմիցս մասնակցել է ռազմամարզական միջոցառումների՝ գրավելով առաջին, երկրորդ պատվավոր տեղեր, ստացել է պատվոգրեր, մեդալներ, որոնց մի մասը փոխանցվել է Հայաստանի պատմության թանգարանին:

2016 թվականին Նորիկն ընդունվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի Գեղարվեստական կրթության ֆակուլտետի «Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում» բաժինը: 2016-2020 թթ.-ին սովորել է համալսարանում, ավարտելուց հետո զորակոչվել է Հայոց բանակ:

Մեր Նորիկը կենսախինդ ու կյանքով լեցուն էր, սիրում էր կյանքն ապրել ճիշտ, ազնիվ, լինել հավատարիմ, օգնել, կարեկցել բոլորին, սիրում էր աշխատել և վաստակել: Յուրաքանչյուր ոք, ով կփորձի բնութագրել Նորիկին, անկասկած, կասի նույնը, ինչ բոլորը… բոլորի սրտում նա մնաց որպես մի ժպտերես երիտասարդ, ով ոչինչ չէր խնայում օգնելու բոլորին, ով թեկուզ տխուր պահերին միշտ ժպտում էր…

Սիրելի զբաղմունքներից մեկը ձկնորսությունն էր: Նույնիսկ փոքր տարիքից դա ակնհայտ էր, նկարվելիս էլ ձկնորսական գործիքը ձեռքին էր…

Մեծ սեր և հետաքրքրություն ուներ ավտոմեքենաների նկատմամբ: Վարում էր տարբեր տեսակի մեքենաներ, նաև հարկ եղած դեպքում կարգավորում էր ավտոմեքենաների տեխնիկական խնդիրները և նորոգում առանց դժվարությունների: 10 տարեկանից մեքենա է վարել: Սիրելի զբաղմունքներից մեկն էլ սպորտն էր: Սիրում էր վոլեյբոլ, բասկետբոլ խաղալ: Զբաղվել է նաև կարատեով:

2020 թվականի հուլիսի 30-ին զորակոչվել է բանակ: Ծառայում էր Մեղրիում: Պատերազմը սկսվելուն պես Նորիկին տեղափոխել են Ջրական (Զաբրայիլ)՝ պաշտպանելու հայրենի հողը: Հենց այդ վայրում էլ նա զոհվել է. անմահացել՝ 2020 թվականի հոկտեմբերի 10-ի գիշերը:

Նորիկը հիմա էլ բոլորիս սրտերում է և կմնա այնտեղ հուր և հավիտյան: Նրա հիշատակը վառ ենք պահելու, պահելու ենք անմար, որպեսզի նրա սխրանքների մասին իմանան բոլորը…

Բոլորիս սրտերում ու վառ հիշողություններում դու հավետ կմնաս նույն բարի, ժպտերես, ազնիվ, հավատարիմ, խելացի ու ընկերասեր Նորիկը, ընկերների ու հարազատների կողմից շա՜տ սիրելի մեր Նորոն:

Արփիկ ԱՓՐԻԿՅԱՆ
Կրթության էլեկտրոնային կառավարման բաժնի մասնագետ

Կիրառական պրակտիկա

Բոլոր գույները հոգուս մեջ

Ես աշխատում եմ բոլոր գույները հոգուս մեջ պահել…

Բարեբախտություն եմ համարում իմ՝ հայոց լեզվի և գրականության ուսուցչների աստղաբույլին ճանաչելը…

Դպրոցական նստարանից մինչ օրս պաշտելու չափ սիրել եմ, հոգուս շատ մոտ եմ ընդունել հայ գրականությունը, հայոց լեզուն…

Տոն էր ինձ համար, տոնակատարություն, որն անշուք տեսք երբեք, երբեք, երբեք չէր ունենում. ավելին էր սպասվածից…

Մասնագիտության ընտրության հարցն էլ սահուն չընթացավ. նախասիրություններն ու նպատակներն անհաշտ են իմ գծած դաշտում…

Իսկ արդեն քննական շրջան հաղթահարելը «դարի իրադարձություն» էր: Եվ երբ արդարանում են նախ և առաջ քո ամենահանդուգն սպասելիքները՝ ընդունվելն ու անվճար սովորելը, ու շարունակելով դա պահպանելը, կարծում եմ, ավելի ես արժևորում այլ գաղափարներ ու նպատակներ, և բնական է, որ կծովանան ուրախությա՜ն, երջանկությա՜ն արցունքներ…

Եվ արդեն մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետի երրորդ կուրսի՝ ոսկե կուրսի ուսանող. գիտնականների կողքին գտնվելը, նրանց լսելը, նրանցից սովորելը (անվերջ կարող եմ թվարկել) երևի բարեբախտություն չէ, այլ պարգև՝ մեծ, անչափելի:

Երրորդ կուրսում իր անբաժան ու խորհրդավոր դերն ունի կիրառական պրակտիկան… Այն, ինչ ուղղակի պատկերացրել եմ, իրականությանը մոտ էր, շատ մոտ ու շոշափելի, մնում էր մեծ պատասխանատվությամբ, գիտելիքների հարուստ պաշարով, պատրաստված ձեռք զարկել ամենաէականին ու վճռորոշին հենց մեր վաղվա օրվա համար:

Գյոթեն ասել է՝ վախը հարբուխի պես վարակիչ է և ամեն անգամ եզակի թիվը դարձնում է հոգնակի… Չգտենք մնալ եզակիի սահմաններում:

Շատերս առաջին անգամ դասարան մտնելիս զգում ենք անասելի վախ, որը հաղթահարում ենք երևի ինքնուրույն, թաքուն… Աշակերտների խոսուն աչքերը մեզ են ուղղված…

Ուշադրությունն ու հետաքրքրությունը մեր շուրջն անսահման է. մտնում ես դասարան, ու արդեն բոլորի հայացքները քոնն են, դու՝ իրենց արտացոլած պատկերում… Հետաքրքիր ու կենդանի պատկեր է ստացվում. կողքի աչքը հաստատ կնկատի: Հետո ներկայացնում ես քեզ, կամ քեզ են ներկայացնում…

Դիմում են այնպես, ինչպես ավելի հոգեհարազատ է. ազգանունդ կամ անունդ շատ հստակ ձևով փոփոխողներ էլ կան: Դու աշակերտներին ես տալու, նրանցից վերցնելու ես. այս վերջինն ինձ համար հատկանշական է…

Մեկ շաբաթ Մանկավարժական համալսարանի հիմնական դպրոցում դասարան մտնելը մի ամբողջ կյանք էր թվում, որտեղ ամեն ինչ անսպասելի է ու միաժամանակ սպասված, տաք գույներով, որովհետև երեխաները ծայրահեղ անկեղծ են, մաքուր՝ իրենց ամեն խոսքում…

Որքա՜ն էի ուրախանում, երբ մի դասապրոցեսում նկատում էի սովորողների հմտությունները, որոնց մասին իրենք պատկերացում էլ չունեն կամ թերագնահատում էին… Բոլորին դասին ներգրավելը առաջին պայմանն է, որին ուղղակի դավաճանել անհնարին է:

«Դուք էլի եք գալու մեր դասարան, չէ՞». հարց, որի պատասխանն այնքա՜ն հարաբերական է: Սակայն հարաբերական երբեք ու երբեք չեն լինի իմ զգացածն ու տպավորությունը. դասարան ես մտել ու անէացած ես դուրս եկել, թվում է, թե 45 րոպե անընդմեջ երգ ու երաժշտություն ես լսել կամ դու ես կատարել…

Գրադարանը, որը մեզ համար ուսուցչանոց է ծառայում, տաք-տաք քննարկումների գողտրիկ անկյուն է… Ուսուցչանոցում ի՜նչ ոգևորությամբ ենք խոսում լսած դասերի, ուսուցիչների վարպետության, զարմանալի հայտնագործությունների մասին…

Երանի՜, հազար երանի մեզ, որ նման ուսուցիչների կողքին ենք. մենք նրանցից շատ, անչափելի շատ բան ունենք սովորելու, մի բարի ժպիտով ավելի ներարկվել, նկատել, տեսնել, գնահատել ու արժևորել է պետք կյանքի պարգևները… Պարգև է, ուրախություն ինձ համար այդ պատերից ներս գտնվելը, դպրոց մտնելը…

Կիրառական պրակտիկայի գույներն էլ իրենց յուրահատուկ տեղն ունեն. ես աշխատում եմ բոլոր գույները հոգուս մեջ պահել…

Աննա ԿՈՍՏԱՆՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետ,
բակալավր, 3-րդ կուրս


Լոռու մարզ, գ. Օձուն, Սբ. Հովհաննես եկեղեցի, 6-րդ դար

ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆՈՒՄ

Ամբողջ աշխարհում ապրիլի 18-ը նշվում է որպես Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օր, որին իր ակտիվ ու անմիջական մասնակցությունն է ցուցաբերում Մանկավարժական համալսարանի թանգարանը: Այս տարի Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օրը նշվում է «Բարդ անցյալներ, բազմազան ապագաներ» խորագրի ներքո:

Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օրվա նպատակն է բարձրացնել մարդկության իրազեկությունը մշակութային ժառանգության, նրանց խոցելիության մասին և անհրաժեշտ ջանքեր գործադրել նրանց պաշտպանության և պահպանման համար:

Համալսարանի թանգարանի հիմնական պարտականություններից է կրթական աշխատանքի, մշտական ցուցադրությունների և ժամանակավոր ցուցահանդեսների միջոցով հանրահռչակել պատմամշակութային արժեքները, քանզի հուշարձանները կազմում են երկրի, ժողովրդի մշակութային ժառանգությունը, որը, կարելի է ասել, իրենից ներկայացնում է մարդկանց հիշատակը և իրադարձությունները հավերժացնող արվեստի ստեղծագործություններ:

Հուշարձանների և տեսարժան վայրերի պահպանության միջազգային օրվա շրջանակում Մանկավարժական համալսարանի թանգարանը, «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի հետ համատեղ իրականացրել է «Հայաստանի միջնադարյան հուշարձանները» խորագրով վիրտուալ ցուցադրություն, որը կգործի մինչև մայիսի 15-ը:

ՀՊՄՀ գիտական
թանգարան

Արագածոտնի մարզ, գ. Բյուրական, Ամբերդ, 10-14-րդ դդ.

Արմավիրի մարզ. ք. Վաղարշապատ, Ջվարթնոցի տաճար, 643-662 թթ.

Արևմտյան Հայաստան, Անի, Մայր տաճար, 989-1001 թթ.

Գեղարքունիքի մարզ, ք. Սևան. Սբ. Առաքելոց եկեղեցի 874 թ.

Ով է իսկական հերոսը

Իսկական հերոսն, իմ կարծիքով, այն մարդն է, որը չի կատարում բարի գործեր իր հեղինակության համար, այլ կատարում է բարի գործ մարդկության փրկության համար: Այս պատմությունը իմ մտահղացումն է և կապ չունի իրականության հետ: 42-րդ դարի կեսերն է, ավելի կոնկրետ՝ 4157 թվականը: Դուրսը քաոս է՝ -250՛. այդպես էր ցույց տալիս իմ ջերմաչափը: Մենք նստած ենք թաքստոցներում, ունենք սեփական լեզու՝ իրար հետ շփվելու համար, և այնտեղ չկա «փող» հասկացությունը: Բոլոր մարդիկ հավասար են: Այն մարդիկ, ովքեր դրսում էին մնացել, մահացել են: Մնացել է ընդամենը 300.000.000 մարդ:

Գիտնականները ստեղծում են նոր արեգակ, որովհետև մեր արեգակին բախվել է ավելի մեծ արեգակ, ինչի հետևանքով Երկիրը շեղվել է իր ուղղությունից: Մենք հիմա երկու գալակտիկաների մեջտեղում ենք: Գիտնականները չեն մրցում, որովհետև այդ պայթյունից հետո, եթե մրցեն, շատ վատ հետևանքներ կառաջանան: Ամեն ամիս տեղի են ունենում երկրաշարժեր: Ամենավատ երկրաշարժը՝ Warld-ն է: Դրանից տուժեց գլխավոր գիտնականը: Հակառակի պես մեզ վրա էր գալիս Killwarld տիեզերաքարը. բոլոր գիտնականները համակերպվել էին մահվանը, բացի Հայկից: Հայկը ստեղծեց հրթիռ, նստեց հռթիռի մեջ և իր կյանքը կործանեց ապագա երկրի համար: Բոլորը տեսնում և լալիս էին:

Արդեն 4166 թվականն է: Գիտնականները կարողացան ստեղծել արեգակ: Ես հպարտ կարող եմ ասել, որ իսկական հերոսը գիտնականներն են: Առանց նրանց 300.000.000 մարդն էլ չէր մնա: Գիտնականները ոչ միայն կարող են կործանել կյանքը, այլև՝ փրկել:

Գուրգեն ՂՈՒԼՂԱԶԱՐՅԱՆ
ՀՊՄՀ հիմնական դպրոց
3-րդ դասարան

ՈՒՍԱՆՈՂԻ ՕՐԱԳՐԻՑ

ԽՈՀԵՐ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

Ժամանակին մի նախագիծ կար, ըստ որի դպրոցականները հերթափոխով գնում էին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր և հարգանքի տուրք մատուցում՝ «հսկում» հուշահամալիրը: Սա մոտավորապես 6 կամ 5 տարի առաջ էր: Այս ծրագրի մասնակիցների շարքում նաև ես էի ու դպրոցական ընկերներս: Այդ ժամանակ գուցե շատ բան չէինք հասկանում և մեզ վրա դրված պատասխանատվությունը չէինք գիտակցում, բայց միևնույն է, մի ուրիշ զգացողություն ունեինք այդ պահին: Յուրաքանչյուրս մոտավորապես կես ժամ անշարժ պիտի կանգնեինք հուշահամալիրի դիմաց ու հերթապահեինք հերթափոխով:

...Կես ժամ էր, բայց Եղեռնի մասին մտորումներից ամենակարևորն էր ինձ համար: Ցուրտ էր, անձրև էր գալիս: Ես մրսում էի, որովհետև հագել էի համազգեստ, որը հարիր էր դպրոցի աշակերտին (ցավոք, էս մշակույթն էլ է վերանում): Մեզ մոտեցավ մի մարդ, ով հայ չէր. շատ մոտ էր կանգնած ինձ, երկար նայում էր և ուսումնասիրում բոլորիս ՝ մեկ-մեկ: Այդ պահին ես հայտնվեցի անբացատրելի մի իրավիճակում: Մի պահ ինձ թվաց, թե ես չեմ ապրում: Ինձ թվում էր, որ ես էլ եմ ամփոփված հուշահամալիրի կրակի մեջ, ու այդ մարդն աշխարհի խորհրդանիշ դարձավ: Մտածում էի, որ նա կարող էր օգնել, բայց ուղղակի նայում էր... Մտածում էի, որ կարող եմ փախչել այդ ցրտից, անձրևից, հոգնածությունից, բայց կապված եմ... Հանկարծ աչքերս լցվեցին, հազիվ զսպեցի, որ չլացեմ (չէր կարելի) ու այդ պահին էլ հասկացա, թե ինչ դժվար է, երբ ուզում ես ցավդ արտահայտել, բայց չես կարողանում... Ու այդ պահից սկսած ատելությունս կրկնապատկվեց: Ես ավելի շատ էի ատում թուրքին, քան դրանից առաջ: Ես ուզում էի մեկ առ մեկ բոլոր թուրքերից լուծել իմ վրեժը, որ ինձ նման միլիոնավոր հայերի սրի քաշեցին... այնուհետև ամեն օր իմ մեջ մի-մի կաթիլ ավելանում են վրեժն ու ատելությունը:

Այսօր էլ ոչինչ չի փոխվել. թուրքը նույնն է մնացել՝ սպանում է ու գլխատում, գերեվարում է ու ավերում: Ես ատում եմ թուրքին: Ես չեմ ուզում իմ երկիրը նորից տալ թուրքին: Նաև հասկանում եմ՝ ոչ մի սահման թանկ չի իմ Մեծ տատիկի, Մեծ պապիկի, եղբորս, ընկերներիս կյանքից:

Ես, մենք թուրքին չվստահելու, թուրքից վրեժ լուծելու, թուրքին չսիրելու պատճառ ունենք՝ միլիոն ու կես...

Մենք պետք է ուշքի գանք, զարգացնենք մեր երկիրը, հզորանանք: Սա է մեր փրկության ուղին և մեր պատվախնդրությունը:

Հարգենք մեր անմեղ զոհերի հիշատակը և հանուն մեր հայրենիքի առաջընթացի յուրաքանչյուրս մեր տեղում պատվախնդրորեն ու ջանասիրաբար սովորենք և աշխատենք:

Սոնա ԽԱՉԱՏՐՅԱՆ
Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետ

«ԱՄԵՆԱԱՆԴԱՌՆԱԼԻՆ ԺԱՄԱՆԱԿԻ ԿՈՐՈՒՍՏՆ Է»

Օրերն անցնում են աննկատ, ինչպես «մի գիշերում բացվում է մուգ մանուշակը»: Անցնում են և էլ հետ չեն գալիս, գնում են՝ իրենց հետ տանելով մեր լավ ու վատ օրերը, հիշողությունները: Ամեն բան հեռանում է մեզնից, և մարդու կյանքն էլ հավիտենական չէ. նա էլ է մի օր գնալու: Ժամանակը բոլորիս հանդեպ անխնա է, անզուսպ: Եվ մարդ արարածը պետք է կարողանա տեղավորվել ժամանակի մեջ, ճիշտ օգտագործել այն, բայց վերջինիս թևերն աշխատում են արագ՝ երբեք չմտածելով կանգ առնելու մասին: Թվում է՝ օրը բացվում և ավարտվում է գեթ մի քանի ժամվա մեջ: Կա՛նգ առ, ժամանա՛կ. մենք ոչինչ չենք հասցնում, մի տեսակ տագնապով ես հեռանում, և չենք հասկանում բերածդ ինչ էր, տարածդ՝ ինչ: Անտարակույս, ժամանակն էլ է մեզնից հոգնել և չի ուզում մի քիչ երկար մնալ, վազում է հոսող ջրի նման, որովհետև մարդկային արժեքները մի տեսակ խեղաթյուրվել են, ամեն բան փոխվել է, բարությունն իր տեղը զիջել է չարությանը, արդարությունը՝ անարդարությանը:

Ներկա ժամանակահատվածում մենք իսկապես կարիք ունենք ժամանակին համընթաց շարժվելու, որովհետև նրա թևերն այդքան երկար չեն, ինչպես մենք ենք պատկերացնում: Մեր կյանքի տարիներն անցնում են աննկատ, իսկ մենք դեռ փորձում ենք տարբերակել, հասկանալ ինչ-որ բաներ, բայց նաև, ինչ-որ տեղ, ցավո՛ք, սխալվում ենք, որովհետև իրականության քողը չենք կարողանում ամբողջությամբ բարձրացնել, քանզի ժամանակը մեր ձեռքերը կապել է: Ապրում ենք՝ միշտ հիշելով, որ մենք պետք է անենք այն, ինչը չի արվել, պետք է աշխատենք իրականացնել երազանքները՝ առաջ նայելու մեծ հույսով:

Ահա ինչու նորից քե՛զ եմ դիմում, ժամանա՛կ, մի պահ կանգ առ, վերջապես հանգստացի՛ր, որ մի քիչ զրուցենք. չէ՞ որ յուրաքանչյուրս քեզ հետ փոքր-ինչ զրուցելու կարիք ունենք... Ժամանակը մեզ ստիպում է ճիշտ մտածել, որովհետև տեսնում է շուրջը կատարվող տարաբնույթ իրադարձություններ: Եվ թող զարմանալի չթվա, եթե ասեմ, որ, այո՛, մենք ենք ստեղծում նման իրավիճակներ:

Այստեղ տեղին է հիշել ֆրանսիացի բնագետ Բյուֆոնի խոսքը. «Ամենաանդառնալի կորուստներից մեկը ժամանակի կորուստն է»: Հասցնենք անել այն, ինչ պետք է, հասցնենք ապրել այնքան, ինչքան որ տրված է, կարողանանք գնահատել մարդկանց, նրանց կատարած գործերը և, վերջապես, քայլենք ժամանակի արագության հետ՝ տեսնելով՝ ինչքա՞ն ենք հետ ընկնում:

Օֆելի ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետ, 1-ին կուրս

Դուրս գալով հեռավար ուսման «ճիրաններից»

Արդեն մի ամիս է, ինչ մեզնից շատերն ազատվել են օնլայն դասընթացների «կապանքներից» և վերջապես այցելում են համալսարաններ: Նախորդ ամիսներին հայացք գցելով՝ կարող ենք փաստել, որ կրթության որակը մի քանի անգամ նվազել էր, արդյունավետություն գրեթե չկար, լսելով «հեռավար» բառը՝ պատանիներն ու երիտասարդներն էլ միանգամից կորցնում էին սովորելու ցանկությունը: Ուսուցիչների ու դասախոսների հետ անմիջական շփման բացակայությունը հաճախ խոչընդոտում էր, որ աշակերտները և ուսանողները նյութը հավուր պատշաճի ընկալեն:

Տարրական դասարաններում աշակերտները սովոր չեն այս հարթակին և հարմարվելու հետ կապված խնդիրներ են առաջանում, ինքնուրույն աշխատելուն նպատակաուղղելն էլ դյուրին գործ չէ: Կապի մերթընդմերթ խափանումներն էլ ավելի անտանելի էին դարձնում դասապրոցեսները: Կրթություն ստացողները սկսել էին լուրջ չվերաբերվել իրենց ուսմանը, բայց մեղադրել նրանց նույնպես չի կարելի: Շատերի խորին համոզմամբ էլ՝ սա ոչ այլ ինչ է, եթե ոչ միտումնավոր կազմակերպված ծրագիր համաշխարհային կազմակերպությունների կողմից՝ բացահայտ կերպով մարդկանց դեգրադացնելու նպատակով: Մարդիկ արդեն ընտելացել էին հեռավորությանը, ոմանք նույնիսկ նախապատվությունն արդեն տալիս էին առաջացած նոր կարգավիճակին՝ չգիտակցելով այն, որ ենթարկվում են ճառագայթման և օր-օրի վատացնում իրենց տեսողությունը: Հաց ուտելով, արդուկ անելով, հեռուստացույցի ալիքները փոխելով կամ սոցիալական ցանցերում ընկերների հետ զրուցելով դասերին ներկա լինելը դարձել էր սովորական... Մի՞թե այս տեմպերով շարունակող սերունդը կարող է վաղը պիտանի լինել մեր՝ առանց այն էլ իր խիստ պայմանները թելադրող հասարակությանը...

Ուսանողների տեսանկյունից ժամանակի, ճանապարհածախսի, կացարանների համար հատկացվելիք գումարների խնայողությունն էր թերևս դիտվում որպես առավելություն, բայց այս պայմաններում էլ կրթվողը լիարժեք հնարավորություն չէր ստանում դրսևորվելու, միաժամանակ էլ դասավանդողը չի կարող ուշադրության կենտրոնում պահել բոլորին՝ իր ձեռքում պահելով «ղեկը»: Դասավանդողների մի մասն էլ գոհ էր դասավանդվողների առաջադիմությունից և դեմ չէր շարունակելու հեռավար դասերը: Բայց այս ամենը փոքր լսարան ունենալու կամ անհատական պարապմունքների պայմաններում, իսկ շատերի հետ աշխատելու դեպքում պատկերը կտրուկ փոխվում էր... Մյուս կողմից էլ ավագ սերնդի ներկայացուցիչները դժվարանում էին օգտվել տեխնիկայի նորամուծություններից կամ դրանց բացակայությունը թույլ չէր տալիս ինչպես հարկն է աշխատել...

Առանց համացանցի ապրելը դարձել է անհավատալի, բայց «սա 21-րդ դարն է, մի քիչ պետք է զարգանալ» արտահայտություն անողներն այնքան էլ պատեհ առիթով չեն օգտագործում այն: Նաև ուշադրություն է պետք սևեռել այն բանին, որ դասագրքերն են կորցրել իրենց նախկին ուժը, նրանք այլևս ոչ ոքի հարկավոր չեն, մոռացվել են ու «չքվել»... Բայց չէ՞ որ առանց գիրք չկա կրթություն, չկա գիտելիք, չկա ապագա...

Գոռ ՄԱԹՈՍՅԱՆ
Կուլտուրայի ֆակուլտետ

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է: Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 22.04.2021 թ.

Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ